ԵՐԵՎԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ԻՆՏԵՐԻԵՐ ԴԻԶԱՅՆԸ ԸՍՏ ՊՐՈՖԻԼՆԵՐԻ

ԱՆԻ ԱՃԱՌՅԱՆ
ԵԳՊԱ ասպիրանտ

Թանգարանային ավանդույթները Հայաստանում բավականին հին անցյալ ունեն, բայց դրանց կազմակերպված օրինակները, հետեւաբար՝ նաեւ ցուցասրահների ինտերիեր դիզայնի նմուշները XX դարից են[1]: Ներկայումս կարեւորվում են Երեւանի թանգարանների ինտերիեր դիզայնի վերանայումը եւ արդիականացումը՝ ըստ ժամանակակից դիզայնի զարգացումների: Բնականաբար, տվյալ հարցի լուծման համար առաջին հերթին պետք է կատարել Երեւանի թանգարանների ցուցասրահների փաստագրավերլուծական քննական ուսումնասիրություն, որի համար առաջին հերթին անհրաժեշտ է մեթոդականորեն լուծել Երեւանի թանգարանների ցուցակագրման հարցը, ինչպես նաեւ, մինչեւ դրանց նախագծային խնդիրների ձեռնարկումը, համակարգել տվյալ թանգարանների ցուցադրական պրոֆիլները:

Ուսումնասիրված պատմատեսական տեղեկությունների համաձայն՝ թանգարանները, ըստ իրենց հասարակական նշանակության, լինում են գիտահետազոտական, ուսումնական, գիտալուսավորչական: Ըստ բնույթի կամ պրոֆիլի՝ լինում են գեղարվեստական, բնագիտական, տեխնիկայի, հուշային, ճարտարապետական եւ համալիր, օրինակ՝ գրականության եւ արվեստի կամ կինոյի եւ թատրոնի թանգարաններ:

Առանձին խումբ են կազմում մեմորիալ, արգելոց, կորպորատիվ թանգարանները եւ հավաքածուները: Վերը նշված պրոֆիլավորումը թելադրում է թանգարանային դիզայնի հետ կապված հստակ չափանիշներ, որոնք իրենց ուրույն դրսեւորումն են գտնում յուրաքանչյուր պրոֆիլի դեպքում: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ տեսականորեն թանգարանները հանդիպում են հետեւյալ 7 պրոֆիլային տարբերակներով:

1. *Գեղարվեստական* թանգարաններում կամ պատկերասրահներում թեմատիկ հավաքածուներով համակարգված են համապատասխան գեղարվեստական աշխատանքները: Այստեղ ինտերիերի հորինվածքը ծավալվում է ցուցասրահներում, որտեղ առաջադրված խնդիրները հետեւյալն են. գեղարվեստական աշխատանքների ջերմալուսային անվտանգության ապահովումը, յու-

[1] Ղաֆադարյան Կ.Գ., «Հայաստանի թանգարանների պատմությունից», *Լրաբեր հասարակական գիտությունների*, 1972, №10, էջ 21:

բաքանչյուր աշխատանքի լուսավորության արդիականացումը՝ ըստ ընդհանուր հորինվածքի, համապատասխան մասնագիտական խմբերի հետազոտական միջավայրի ապահովումը, գունային հարաբերությունների այնպիսի մատուցումը, որն ընդհանրական լինելով բազմաբնույթ աշխատանքների համար՝ չխոչընդոտի յուրաքանչյուրի ընկալումը: Կարեւոր դեր ունեն նաեւ շրջանակների ընտրությունը եւ, տարաչափ աշխատանքների դեպքում, դիտակետի բարձրության պահպանումը: Կարեւոր են նաեւ տարամասշտաբ արձանների գրագետ ցուցադրումն ու ցուցափեղկերի դիզայնը, որոնցով էլ պայմանավորվում է լուսաստվերի փոխհարաբերության ճիշտ մատուցումը: Արհեստական լուսավորության դեպքում այն առավելապես պետք է մոտեցվի բնականին:

Բոլոր թանգարաններում կարեւորվում է նաեւ մարդկային հոսքի ճիշտ ուղղորդումը, որն այցելուին իր նպատակակետին հասցնելու հնարավորինս հեշտ ուղիներ է առաջարկում՝ ժամանակաբովանդակային հաջորդականությունը պահպանելով: Դադարի եւ հանգստանալու գոտիների ապահովումը եւս թանգարանների ինտերիերի կարեւորագույն գործառույթներից է համարվում: Առանձնահատուկ ուշադրության է արժանի նաեւ մուտքի եւ նախամուտքի դիզայնը, որը պետք է ուղղորդող, ճանաչողական նախաբան հանդիսանա յուրաքանչյուր թանգարանի եւ ցուցասրահի համար: Թանգարանի այս պրոֆիլի լավագույն օրինակներից են Փոլ Գեթթի թանգարանը՝ Լոս Անջելեսում, Նորթոն Սայմոնի թանգարանը՝ Փասադենայում, Էրմիտաժը՝ Սանկտ Պետերբուրգում եւ այլն, իսկ Երեւանում հավաքածուների բազմազանությամբ եւ նմուշների ներկայացման գրագիտությամբ աչքի է ընկնում Հայաստանի ազգային պատկերասրահը (նկ. 1)[2]:

2. *Պատմական* թանգարաններում ցուցադրվում են որեւէ դարաշրջանի կամ երեւույթի առավել հին նմուշները, որոնք վկայում են մինչեւ հազարամյա վաղեմություն ունեցող մշակույթի մասին՝ համապատասխան իրերի եւ աղբյուրների հիշատակությամբ: Այստեղ կարեւորվում է ինչպես հնամաշ գտածոների պահպանման պայմանների ապահովումը, այնպես էլ գունալուսային շեշտադրված ներկայացումը: Յուրաքանչյուր ժամանակաշրջան իր ցուցադրման առանձնահատկություններն ունի. պահպանելով հորինվածքի ամբողջականությունը՝ մատուցել նմուշներն իրենց առանձին լույսի տակ:

Թանգարանի այս պրոֆիլի լավագույն օրինակներից են Գերմանիայի պատմության թանգարանը եւ Պերգամոնի թանգարանը՝ Բեռլինում, Եգիպտա-

[2] Փոլ Գեթթի թանգարան, Լոս Անջելես - http://www.getty.edu/visit/center/architecture.html#sthash.nvHyA2xO.dpuf, Նորթոն Սայմոնի թանգարան, Փասադենա - http://www.nortonsimon.org/museum-architecture, էրմիտաժ, Սանկտ Պետերբուրգ - http://www.hermitagemuseum.org/wps/portal/ hermitage/?lng=en

կան թանգարանը՝ Կահիրեում եւ այլն[3]: Քննարկվող պրոֆիլի թանգարաններից Երեւանում լավագույնս հանդես է գալիս Հայաստանի պատմության թանգարանը՝ թե՛ ցուցանմուշների հարստությամբ եւ թե՛ ինտերիերի կազմակերպմամբ (նկ. 2):

3. *Բնագիտական* թանգարաններում, մասնավորապես, ցուցադրվում եւ պահպանվում են բուսական, կենդանական, կենսաբանական յուրահատուկ արժեք ներկայացնող նմուշներ, որոնց կից հիմնականում կատարվում են հետազոտություններ եւ փորձեր: Այստեղ դիզայներական խնդիրներն առավել բարդացված են, քանի որ յուրաքանչյուր նմուշ պահպանման համար պահանջում է իրեն բնորոշ բնական պայմաններ, եւ, միաժամանակ, այն պետք է հարմարեցված լինի գիտահետազոտական աշխատանքների կատարման համար: Թանգարանի այս պրոֆիլի լավագույն օրինակներից են բնության պատմության ամերիկյան թանգարանները Նյու Յորքում, Լոնդոնում, Բեռլինում եւ այլն[4]: Երեւանում գործում է Հայաստանի բնության պետական թանգարանը, որի ինտերիերը թերեւս արդիականացման կարիք ունի (նկ. 3):

4. *Տեխնիկական* թանգարաններում ցուցադրվում են տեխնիկայի տարբեր միջոցներ, հատկանշական են տրանսպորտային միջոցների ցուցադրությունները, որոնք երբեմն իրենց հսկայական չափերի պատճառով ենթադրում են առավել մեծ տարածքներ: Այսպիսի մոնումենտալ ցուցադրություններում կարեւորվում է հատկապես մարդու եւ ցուցանմուշի միջեւ անհատական շփման հնարավորությունը, որով առավել անմիջական միջավայրային փոխհարաբերություն է ստեղծվում: Այստեղ ինտերիերի դիզայնի հասկացությունը հարաբերական բնույթ է կրում եւ առավել պարզեցված է, քանի որ չի պահանջում յուրահատուկ ջերմային, լուսային կամ կլիմայական պայմաններ՝ իրերի անվտանգությունն ապահովելու համար: Առավելապես կարեւորություն է տրվում ժամանակաբովանդակային համապատասխանությանը՝ ընդհանուր հաջորդականության մեջ: Թանգարանի այս պրոֆիլի լավագույն օրինակներից են Գերմանական տեխնիկական թանգարանը Բեռլինում, Գերմանական թանգարանը Մյունխենում եւ այլն[5]: Երեւանում գործող տեխնիկական թանգարաններից հարկ է նշել Հայաստանի երկաթուղու պատմության թանգարանը, որտեղ ներ-

[3] Գերմանիայի պատմության թանգարան - http://www.dhm.de/lemo/, Պերգամոնի թանգարան - http://www.smb.museum/museen-und-einrichtungen/pergamonmuseum/home.html, Եգիպտական թանգարան - http://www.museumsyndicate.com/

[4] Բնության պատմության ամերիկյան թանգարան, Նյու Յորք - http://www.amnh.org/, Բնության պատմության թանգարան, Լոնդոն - http://www.nhm.ac.uk/, Բնության պատմության թանգարան, Բեռլին - http://www.naturkundemuseum-berlin.de/

[5] Գերմանական տեխնիկական թանգարան, Բեռլին - http://www.sdtb.de/Englisch.55.0.html, Գերմանական թանգարան, Մյունխեն - http://www.deutsches-museum.de/

կայացված ցուցանմուշները համապատասխան ինտերիերում մատուցվելու վերանայման կարիք ունեն (նկ. 4):

5. *Հուշային* թանգարանները հիմնականում որեւէ հեղինակի ապրած տան օրինակներով են, որտեղ ինտերիերի դիզայնը գրեթե փոփոխության չի ենթարկվում: Այստեղ առանցքային խնդիրը տվյալ հեղինակի կենդանությունը եւ ժամանակի շունչը պահպանելն ու հաղորդելն է: Նույնիսկ որոշ չափով թափթփված աշխատանքային միջավայրն առավել շեշտում է այդ զգացողությունը: Կան նաեւ հուշային թանգարաններ, որտեղ առանձին սրահներում կազմակերպվում են ցուցահանդեսներ, կինոդիտումներ, քննարկումներ, որոնք թանգարանային կյանքի անբաժանելի մասն են կազմում: Թանգարանի այս պրոֆիլի լավագույն օրինակներից են Անտոնիո Գաուդիի տուն-թանգարանը Բարսելոնայում, Մոցարտի տուն-թանգարանը Ավստրիայում, Միխայիլ Բուլգակովի թանգարանը Մոսկվայում եւ այլն[6]: Թեեւ Երեւանն աչքի է ընկնում հուշային թանգարանների քանակով, սակայն դրանց մեջ իր առանձնահատուկ տեղն է զբաղեցնում Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանը՝ հատկապես ինտերիերի այն հատվածով, որն ամբողջությամբ կրկնում է գրողի տան շունչը, ինչպես նաեւ համալրված է ինտերակտիվ սարքավորումներով (նկ. 5):

6. *Ճարտարապետական* թանգարաններում կազմակերպվում են ինչպես մշտական, այնպես էլ ժամանակավոր ցուցահանդեսներ: Հիմնականում ցուցանմուշների տեսքով ներկայացվում են պլանային գծագրեր, ճակատային հորինվածքներ եւ մանրակերտեր: Այստեղ դիզայներական լուծումները պետք է տրված լինեն առավելապես սրելու եւ կենտրոնացնելու դիտողի ուշադրությունը գծագրերի ճշգրտության եւ ծավալատարածական լուծումները շեշտելու ուղղությամբ: Այսպիսի թանգարաններում հաճախ առկա են նաեւ ինստիտուտներ, որտեղ կատարվում են ուսումնասիրություններ եւ գիտական հետազոտություններ: Թանգարանի այս պրոֆիլի լավագույն օրինակներից են Լը Կորբյուզե հիմնադրամը եւ Տուրբուլենս-Ֆրակ կենտրոնը Ֆրանսիայում, Ա. Վ. Շչուսեւի անվան ազգային ճարտարապետական թանգարանը Մոսկվայում եւ այլն[7]: Հայկական ճարտարապետության պատմական օրինակները զետեղված են Հայաստանի ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտում: Այստեղ ներկայացված հատակագծերն ու մանրակերտերը պահանջում են ցուցադրության

[6] Անտոնիո Գաուդիի տուն-թանգարան, Բարսելոնա - http://www.casamuseugaudi.org/, Մոցարտի տուն- թանգարան, Ավստրիա - http://www.mozarteum.at/en/museums/mozarts-birthplace.html, Միխայիլ Բուլգակովի թանգարան, Մոսկվա - http://www.bulgakovmuseum.ru/en/

[7] Լը Կորբյուզե հիմնադրամ, Ֆրանսիա - http://www.fondationlecorbusier.fr/, Տուրբուլենս-Ֆրակ կենտրոն, Ֆրանսիա - http://www.frac-centre.fr/index.php?lang=2, Ա. Վ. Շչուսեւի անվան ազգային ճարտարապետական թանգարան, Մոսկվա - http://muar.ru/new/events/vystavki

կազմակերպման յուրահատուկ մոտեցում ողջ ինտերիերի համատեքստում եւ ունեն արդիականացման կարիք (նկ. 6):

7. Ի հավելումն վերոհիշյալ թանգարանների՝ տարածում ունեն նաեւ *համալիր*՝ համակարգային թանգարաններ, որտեղ մեկ ցուցադրությունում համակարգված են տարաբնույթ նմուշներ, օրինակ՝ թատրոնի, կինոյի եւ գրականության: Այստեղ ինտերիերի դիզայներական լուծումների միջոցով են թելադրվում մեկ միջավայրից մյուսին սահուն անցումը եւ բովանդակային տարբերությունները: Թանգարանի այս պրոֆիլի լավագույն օրինակներից է Փարիզի Ժորժ Պոմպիդուի բազմանպատակ ցուցադրությունների կազմակերպման կենտրոնը[8]: Երեւանում գործում է Ե. Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանը, որը վերջին տարիների վերանորոգումներից հետո լավագույնս է ներկայացրել իր բազմապրոֆիլ ցուցադրությունը ամբողջ ինտերիեր դիզայնի ներքո՝ հագեցնելով այն նաեւ ժամանակակից ինտերակտիվ սարքավորումներով (նկ. 7):

Ներկայումս Երեւանի տարածքում գործում է շուրջ 40 թանգարան, որոնք գտնվում են ՀՀ մշակույթի, կրթության եւ գիտության, պաշտպանության, առողջապահության նախարարությունների, Երեւանի քաղաքապետարանի ենթակայության ներքո, ինչպես նաեւ մասնավոր հավաքածուներ[9]: Այդ թանգարանների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ մայրաքաղաքում կան թանգարանների պրոֆիլային բոլոր տարբերակները, որոնք, փաստագրավերլուծական հենքի ստեղծման նպատակով կարելի է դասակարգել հետեւյալ աղյուսակի տվյալներով:

Գեղարվեստական
Հայաստանի ազգային պատկերասրահ
Փայտարվեստի թանգարան
Ժամանակակից արվեստի թանգարան
Գ. Գրիգորյանի (Ջոտտո) արվեստանոց-թանգարան
Ռուսական արվեստի թանգարան (պրոֆ. Ա. Աբրահամյանի հավաքածու)

[8] Ժորժ Պոմպիդուի կենտրոն, Փարիզ - https://www.centrepompidou.fr

[9] ՀՀ մշակույթի նախարության թանգարանների ցանկ - http://mincult.am/datas/media/museums_1_1.doc, ՀՀ կրթության եւ գիտության նախարարության Խաչատուր Աբովյանի տուն-թանգարան - http://hy.wikipedia.org/wiki/Աբովյանի_տուն-թանգարան, ՀՀ պաշտպանության նախարարության Մայր Հայաստանի զինվորական թանգարան - http://www.mayrhayastan.am/collections.html, ՀՀ առողջապահության նախարարության Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի Հայաստանի բժշկության պատմության թանգարան - http://hy.wikipedia.org/wiki/Հայաստանի_բժշկության_պատմության_թանգարան

Երվանդ Քոչարի թանգարան
Երեւանի ժամանակակից արվեստի թանգարան
«Գաֆէսճեան» արվեստի կենտրոն
«Կալենց» թանգարան
Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոն
Հ. Կոջոյանի եւ Ա. Սարգսյանի տուն-թանգարան

Պատմական
Հայաստանի պատմության թանգարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ-թանգարան (Մատենադարան)
Էրեբունիի պատմահնագիտական արգելոց-թանգարան
ՀՀ ՊՆ Մայր Հայաստանի զինվորական թանգարան
ԵՊՀ պատմության թանգարան
Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի պատմության թանգարան
Զորավար Անդրանիկի թանգարան
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ
Հայ յեղափոխական դաշնակցութեան պատմութեան թանգարան
Երեւան քաղաքի պատմության թանգարան
Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի Հայաստանի բժշկության պատմության թանգարան
Երեւանի «Արարատ» կոնյակի, գինու եւ օղու թանգարան

Բնագիտական
Հ. Կարապետյանի անվան երկրաբանական թանգարան
Հայաստանի բնության պետական թանգարան

Տեխնիկական
Հայաստանի երկաթուղու թանգարան
Կապի թանգարան

Հուշային
Ի. Աբովյանի տուն-թանգարան
Հովհ. Թումանյանի տուն-թանգարան
Ավ. Իսահակյանի տուն-թանգարան

Ալ. Սղենդիարյանի տուն-թանգարան
Մ. Սարյանի տուն-թանգարան
Ե. Չարենցի տուն-թանգարան
Դ. Դեմիրճյանի տուն-թանգարան
Ա. Խաչատրյանի տուն-թանգարան
Ս. Կաղուտիկյանի տուն-թանգարան
Կ. Դեմիրճյանի թանգարան
Ս. Փարաջանովի թանգարան
Շ. Ազնավուրի կեցավայր-տուն-թանգարան
Կոմիտասի թանգարան-ինստիտուտ

Ճարտարապետական
Հայաստանի ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ
Ալ. Թամանյանի թանգարան-ինստիտուտ

Կոմպլեքսային
Ե. Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարան

Փաստորեն, Երեւանում գործող թանգարանները բազմապրոֆիլ են եւ ներկայումս ունեն դիզայներական առումով վերամշակված միջազգային զուգահեռներ: Մեծ անհրաժեշտություն է այդ թանգարանների ինտերիեր դիզայնի վերանայումը նորարարական տեսանկյունից, որը շատ կարեւոր գործոն է երեւանյան թանգարանների քննական բարելավման գործում:

INTERIOR DESIGN AND CLASSIFICATION OF YEREVAN CITY MUSEUMS ACCORDING TO THEIR PROFILES

ANI ATSHARYAN,
Ph.D. Challenger

In the article in classified order are presented the main principles of museum interior design with their profiles, in addition the classified order of existing 40 museums in Yerevan is presented. Included museum profiles accordingly are the followings: art, historical and archeological, natural, technical, memorial, architectural, complex as well as site museums of monuments and expeditions.

The main principles of museum interior design vary definitely in each profile and demand different design approaches to provide required functions. Overall, from functional view profiles dictate the presentation, preservation, safety, direction planning and many other professional skills that play important role in complete design making. Thus, for planning correct museum interior design the best examples of each museum profile in the world are provided.

ДИЗАЙН ИНТЕРЬЕРА И КЛАССИФИКАЦИЯ МУЗЕЕВ ЕРЕВАНА ПО ПРОФИЛЯМ

АНИ АЧАРЯН,
аспирант

В статье представлены основные принципы дизайна интерьера музеев по профилям и систематический порядок существующих 40 музеев Еревана. Включенные профили музеев, соответственно являются: художественные, исторические и археологические, естественные, технические, мемориальные, архитектурные, комплексные.

Основные принципы дизайна интерьера музея, безусловно, различаются в каждом профиле и требуют различных подходов к проектированию для обеспечения необходимых функций. В целом, каждый профиль диктует презентацию, сохранение, безопасность экспозиции, а так же планирование направления движения людей и многие другие профессиональные навыки, которые играют важную роль для создания полного дизайна. Таким образом, для правильной планировки дизайна интерьера музеев, предоставлены лучшие образцы всемирных музеев каждого профиля.

1. Հայաստանի ազգային պատկերասրահ
2. Հայաստանի պատմության թանգարան
3. Հայաստանի բնության պետական թանգարան
4. Հայաստանի երկաթուղու պատմության թանգարան
5. Հովհաննես Թումանյանի տուն-թանգարան

4

5

6. Հայաստանի ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ
7. Ե. Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարան